



ԵՐԿՈՒ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ԼԻԲԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ. Լիբանանի Հայոճախը 1945ին

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

Բ. Համաշխարհային աւարտէն կարճ ժամանակ ետք, ՀԲԸ Միութեան Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովը, որոն իրաւասութեան ծիրին մէջ էր Սուրիա-Լիբանանի շրջանակը, պատուիրակութիւն մը ղրկելով շրջան, անմիջական՝ դաշտային քննութեան մը լոյսին տակ, կը ձգտի վերածնունդարկել Սուրիա-Լիբանանի շրջանի իր գործունէութեան, վերաշխուճացնել իր յարաբերութիւնները հայոճախին եւ ՀԲԸ շրջանակին հետ, վերածնել աջակցութիւնը զոյգ հայոճախներուն ընկերային-առողջապահական-կրթական կարիքներուն բաւարարման, մանաւանդ որ սուրիա-լիբանանայինը սկսեր էր տեսանելի դառնալ Միջին Արեւելքի սփիւռքահայ բարոյսին վրայ՝ Այս առաքելութեամբ, վարչականներ Ճանիկ Չազըր եւ Պետրոս Կիրակոսեան² Յունուար-Փետրուար 1945ին կ'ուղղուին շրջան: Կիրակոսեան, սակայն, ճամփուն սկիզբին կը

ստիպուի վերադառնալ Եգիպտոս՝ ընտանեկան պարտականութիւններով: Չազըր առանձին շարունակելով առաքելութիւնը, կու գայ Պէյրութ, կը շփուի կրօնական թէ ազգային առաջնորդներու հետ, հոսկ, կը տեղեկագրէ Գահիրէ, մատնանշելով մանաւանդ Ալեքսանտրիոյ սանճաքի 1939ի գաղթականութեան աջակցութեան համար յառաջացած Նպաստից Յանձնաժողովին³, ՀԲԸ Սուրիոյ եւ Լիբանանի մասնաժողովներուն, կրթական տեսչութեան, շրջանի գործիչի, համազգային հանգանակութեան հարցերը եւ ըստ այդմ կը կատարէ յանձնարարութիւններ:

Օգոստոս 1945ին, նոյն նպատակով եւ նման առաքելութեամբ Պէյրուֆ կը ժամանէ ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութեան փոխնախագահ Հայկ Գաւուքճեան⁴, Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովի անդամ՝ Առաքել Եազընեանի հետ (այցելութիւնը կ'ընդգրկէ Սուրիա-Լիբանանը): Գաւուքճեան իր կարգին կը պատրաստէ ընդգծուած առաջնահերթութիւններով տեղեկագիր մը, զոր կը ներկայացնէ ՀԲԸՄ Նիւ Եորքի Կեդրոնական Վարչութեան եւ Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին, 11 Սեպտեմբեր 1945 թուակիր ստորագրութեամբ: Գաւուքճեան կը յանձնէ նաեւ «օրինակը Ամերիկայի Կեդր[ոնական] Յանձնաժողովի ատենապետ տ[իար] Ճ[իմ] Չանգալեանի նօթերուն, Սուրիա եւ Լիբանան իր այցելութեան առթիւ»: Գաւուքճեան-Եազընեան-Չանգալեանի այցելութիւններուն մանրամասնութիւններ կ'արձարծուին ՀԲԸՄ Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովի 5 Հոկտեմբեր 1945ի ժողովին ընթացքին⁵:

Վերոյիշեալէն պարզ կը դառնայ, որ 1945ին երեք տարբեր տեղեկագրեր պատրաստուած են Սուրիա-Լիբանանի հայօճախներուն մասին՝ ՀԲԸՄի նախաձեռնութեամբ: Մեր հրապարակումին ծիրէն դուրս է քննարկումը այդ տեղեկագրերուն տուն տուող պատճառներուն եւ անոնց աղթած հետեւանքներուն:

Ստորեւ կը հրատարակենք Գաւուքճեանի տեղեկագիրը՝ մեքենագրեալ հինգ էջ, որուն կը յաջորդէ նոյն տարուան վերաբերող «Նոթեր» ընդհանուր խորագրով եւ այլնայլ ենթախորագրերով շարադրուած մեքենագրեալ չորս էջանի նիւթը, որ - ըստ վերոյիշեալ մէջբերումին - կը պատկանի Ճիմ Չանգալեանի: Առայժմ չկրցանք գտնել ճանիկ Չազըրի տեղեկագիրը:

Հրատարակուող զոյգ փաստաթուղթերը լիբանահայ կենսադաշտը կը քննարկեն ՀԲԸՄի ելակէտէն, կ'արծարծեն ՀԲԸՄիութեան Լիբանանի կառոյցին մէջ յառաջացած երկուութիւնը՝ Նպաստից Յանձնաժողովին եւ տեղական մասնաժողովին առկայութեամբ: Փաստաթուղթերը իւրայատուկ են Ալեքսանտրէի սանճաքի գաղթականութեան՝ Այնճարի, Սուրի, Ռաս Ու Այնի (Ռաշիտի) եւ Պէյրուֆի գաղթակայաններու նկարագրութեամբ, կը պատկերեն գաղթականներուն վիճակը, կ'արծարծեն հայօճախին վարման վերաբերող խնդիրներ, կը նշեն թիւեր, կ'անդրադառնան նաեւ Պէյրուֆի մեծ քանիին, որ մնացուկն էր 1920ականներու սկիզբին Կիլիկիոյ պարպումով յառաջացած գաղթակայանին: Շահեկան են ներկայացուած տուեալները, նաեւ այն՝ որ Բ. Համաշխարհային Պատերազմէն ետք Լիբանանի մէջ ծեսադրուած է բարեկեցիկ հայ խաւ մը, որ ի վիճակի է հոգալու հայօճախին կարիքները, սակայն կը շարունակէ վստահիլ արտաքին նպաստի...: Հետաքրքրական է նաեւ տեղեկագրողին մտահոգութիւնը ՀԲԸՄ նպաստից գործունէութեան արդիւնքներէն: Ուշագրաւ են նաեւ միջմիութեանական, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան հետ յարաբերութիւններու բնութագրումները, որոնք կը դրսեւորեն ատենի մտայնութիւնը, առկայ եւ խմորուող հակասութիւնները:

Փաստաթուղթերը յայտնաբերած ենք ՀԲԸՄիության Գահիրեի արխիվին: Կատարած ենք լեզուական և ուղղագրական նուազագույն հայտմներ:

ԼԻԲԱՆԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆՍ ԱՌԹԻԻ ՆՈՐԹԵՐ Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ՏԵՂՈՒՅՆ
ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ ՈՒ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՁ

1. **Անդրնահարի Քեմփեր.** - Պելրույֆ հասնելուս երկրորդ օրը, առաջին այցելությունս ըրի յիշեալ երկու քեմփերուն - Ամանու և սանճաքցիներու⁶: Առաջինը Պելրույֆի ամենեն հին քեմփն է հաստատուած 20-22 տարիներէ իվեր: Իսկ երկրորդը հաստատուած է 1939ին, սանճաքցիներու ժամանումով: Այս քեմփերը կը բաղկանան թիթեղաշէն տնակներէ, ծովին մօտիկը: Այդ տնակներուն մէջ կը բնակին մէկ-մէկ ընտանիք, իւրաքանչիւրը երբեմն 7-8 հոգիէ բաղկացեալ, մեծամասնութեամբ փոքրիկներէ: Աւելորդ է յայտնել որ առողջապահական տարրական պէտքերէ զուրկ են այս քեմփերը: Ամառը, անձրեւներու չզոյութեան պատճառաւ փոշիի մէջ են, իսկ ձմեռը, ինչպէս հաստատեցին, մինչեւ կէս մեթր ցելսի մէջ կը մնան նոյն եղանակին: Ահա, այս պայմաններուն հանդուրժելով է որ Ամանուս քեմփի բնակիչները կը մնան այդ վայրին մէջ, 20-22 տարիներէ իվեր, մինչ կ'ըսուի որ հոն բնակող շուրջ 300-350 ընտանիքներուն մեծամասնութիւնը ի վիճակի է քաղաքին մէջ տուն վարձելու: Կ'ըսուի որ անոնցմէ այլուր տուն շինողներ կան զորս վարձու տուած են և իրենց կը նախընտրեն այդ աղքատութեան մէջ բնակիլ: Ասիկա որոշ այլապէս եղած մը ցոյց կու տայ մեր ժողովուրդին մէջ: Սանճաքցիներու քեմփը, որ նոյնքան բնակչութիւն մը ունի, համեմատաբար աւելի կարօտեալներէ կը բաղկանայ և զարմանալի է որ աւելի մաքուր կը ներկայանայ: Ընդհանուր կերպով ծուլութիւն կը տեսնուի այս քեմփի բնակիչներուն այրերուն մօտ, մինչ կիները աւելի աշխատասէր են: Անոնք կը սպասեն որ կառավարութիւնը կամ մարդասիրական կազմակերպութիւնները իրենց համար տուներ շինեն և հոն ծրիաբար տեղատրուին, ինչ որ ներկայ պայմաններուն մէջ, ու իրենց այդ բնակած վայրին մէջ կարելի չէ: Լաւագոյն պիտի ըլլար որ երբ քիչ մը քաղաքին մէջ խնդրամը վերջ գտնէ ու զինուորներու գրաւած շէնքերը պարպուին, կառավարութիւնը փցնէ այդ քեմփերը, որպէսզի անոնցմէ ունեւորները ու ի վիճակի եղողները իրենց գլխուն ճարը նային, ու եթէ կարօտեալներ մնան՝ անոնք այլ միջոցներով տեղատրուին: Այս երկու քեմփերուն մէջ միքանի հանրային ճեմիշներ շինուած են Նպաստից Յանձնաժողովին կողմէն և մայրիւրիայի դէմ պայքար կը տարուի Տոքթ. Տ. Պէրպէրեանի կողմէ, սակայն, ոչ աչքի զարնող կերպով և ոչ՝ պահանջուած աստիճանի վրայ: Տոքթ. Պէրպէրեան մայրուն երեք հոգի կը պահէ այս քեմփերուն մէջ մայրիւրիայի համար, զորս չտեսայ այցելած օրս: Քեմփերու տնակներու մէջ շատ մը այրեր պատկած կը քնանային իբրեւ թէ գործ չունենալուն պատճառաւ, մինչ, կառավարութեան կողմէ բացուած քանալի՝ մը մէջ աղտոտութիւն հաւաքուած էր և այդ աղտոտութեան հոտէն կը գանգատէին: Այդ պատկող և քնացող մարդիկը փոխանակ այդ քանալը մաքրելու և պարապ չանցընելու իրենց ժամանակը՝ իրենց իսկ առողջութեան համար, կը սպասեն որ ուրիշներ գործաւորները դրկեն և քանալը մաքրել տան: Ասիկա փոքր ապացոյց մըն է որ քեմփերու ժողովուրդին մէջ նախաձեռնութեան ոգին մեռած է բոլորովին և ամէն բան դուրսէն կը սպասէ, իր կարելին չընելով: Տարիներէ իվեր տրուած նպաստները մեծ մասամբ այդ ոգիին ծնունդն են:

2. **Այնճար.** - Երկրորդ օրը այցելեցի Այնճար, որ ինչպէս յայտնի է, իր վրայ շատ խօսեցնել տուած է ցարդ և տակապին ալ պիտի խօսեցնել տայ: 1060 տուններ կը

բաղկանայ, որոնց իւրաքանչիւրը մէկական սենեակ է յարակից ճեմիշով մը: Գաղթականներէն շատեր այդ մէկական սենեակով տուներուն քով յարակից մասեր շինած են իրենց ծախքով՝ որոնք կը գործածուին իբր բնակարանի մաս եւ կենդանիներու ախոտ: Իւրաքանչիւր ընտանիք ունի բաականաչափ հողամաս մը մշակութեան համար: Այնճարի ջուրը շատ առատ եւ մաքուր է եւ այժմ թիւրպիներ (ջրնոտ գործիքը – Ա.Տ.) շինուած ըլլալով ամէն կողմ կը հոսեցուի թէ՛ խմելու եւ թէ՛ ոռոգման համար: Թրաքթօր մը ունին նովորած Տ. Թիւֆենկեանի կողմէ: Ասիկա Սուրի⁸ պէտք էր տրուած ըլլար, ըստ Տ. Թիւֆենկեանի կամքին, բայց Այնճարի տրուած է: Իսկ Բարեգործականի կողմէ գնունիքը պիտի տրուի Սուրի, սակայն, թրաքթօր մնացած չըլլալով՝ տակաւին ասիկա գնուած չէ: Այնճարի մէջ կը գործէ նաեւ Գարակէօգեան Մանկանոցը⁹, ուր մեր այցելած օրը թժիշկ մը կար մնայուն հիւանդապահօրին զատ: Մանուկներու հարկ եղած խնամքը կը տրուի, ինչպէս նաեւ տկարակզմներուն՝ կաթ: Ասկէ զատ կիսաւարտ կը մնայ - 7000 տոլարի նախատեսուած գումարը ծախսուել յետոյ - մայրանոցը որուն լրացումին համար 4000 տոլար գումարի մը պէտք ցոյց կը տրուի: Ինչպէս յայտնի է, 7000 տոլարին 4000ը [ՀԲԸ] Միութիւնը տուած է, իսկ 3000 տոլարը՝ Օգնութեան Խաչը եւ կ'ուզուի նոյն համեմատութեամբ երկուքին օժանդակութեամբ լրացնել այդ շէնքը: Այդ մայրանոցին շինութեան [իւրաքանչիւր] Յանձնախումբ մը կազմուած է Օգնութեան Խաչին եւ Նպաստից Յանձնաժողովին ներկայացուցիչներէն: Անմիջապէս յայտնեմ որ բացարձակ սխալ մը եղած է այդ գործակցութիւնը: Կ'ամ Բարեգործականը պէտք է շինէ մայրանոցը, իր անունը տալով անոր եւ կ'ամ ասիկա փափաքելի չըլլալու պարագային՝ Օգնութեան Խաչը: Այդ գործակցութեան շուտով պէտք է վերջ տրուի բանի որ Հայաստանի կառավարութեան մեր ունեցած բարոյօք յարաբերութեանց վրայ կրնան ազդել նման գործակցութիւնները: Կը կարծեմ թէ արտասահմանի մէջ դաշնակցականներուն կողմէ Բարեգործականի հետ գործակցելու այժմու միտումները նպաստակ ունին Միութեան յարաբերութիւններուն վրայ - Հայաստանի կառավարութեան հետ - ստուեր ձգելու եւ Միութեանն ալ գէշ մարդ ընելու կառավարութեան հետ: Հոս ալ հակամալարիական գործը շատ խեղճ վիճակի մը մէջ յառաջ կը տարուի: Եթէ ցարդ տարուէ տարի գործածուած կարեւոր գումարները յատկացուած ըլլային ջուրի ճամփաներուն սիմենթով շինութեան, միանգամընդմիջտ հարցը լուծուած կ'ըլլար: Մինչդեռ, այդպէս չէ եղած. հողին մէջ ճամփաներ փորուած են՝ եզերքները քարեր շարուելով, ուր միշտ խոտեր կը բուսնին եւ մարդոց ամսական ու օրականներ կը վճարուն աւտոնք կրկին ու կրկին բանալու եւ խոտերը ատեն-ատեն կտրելու համար: Այնճարի մէջ տարեկան 7000-8000 տոլար կը ծախսուի հակամալարիական պայքարի համար, բայց, բան մը չի տեսնուիր:

Այս համառօտ գիծերէն յետոյ զոր ներկայացուցի, ցաւալի է հաստատել որ Այնճարի մէջ, ուր Միութիւնը մեծ գումարներ ծախսած է, մարդիկ կ'անգիտանան – բացարձակապէս - Միութեան ըրածները եւ Միութեան անունը բերանը անող չկայ: Ամէն բանի համար «Օգնութեան Խաչը ըրաւ» կ'ըսեն եւ կամ կու տան Տոքթ. Ենի-գոմշուեանի¹⁰ եւ Տոքթ. Պէրպէրեանի¹¹ անունները, կարծես թէ Բարեգործականի ծախսած դրամները անոնք տուած են: Այդ գաղթականը ուղղակի դաշնակցականներու տիրապետութեան ներքեւ է, որոնց ատեն մը ուժ տուած են ֆրանսացիները եւ հոն Միութեան դրամները ծախսուած են անհաշի ու անընթերցելի¹²: Հակառակ ասոր, Նպաստից Յանձնաժողովը միշտ ամենէն անկի հոգաժողութիւն[ը] ցոյց տուած է եւ այժմ կ'ուզէ տալ այս գաղթականային չեմ գիտեր ի՞նչ նկատումներով: Այս ժողովուրդը այլեւս պէտք չունի նպաստի, հող ու տուն ունի եւ պարտի իր աշխատ-

տանքով իր ապրուստը ճարել: Եթե շարունակով օգնել անոնց՝ ալ անեյի ծուլութեան պիտի վարժուին, ինչպէս արդէն այրերը եղած են եւ ինքզինքնին օղիի տուած են: Այնճարի մէջ 20-22 նպարավաճառի խանութներ կան, ուր նպարեղէն անեյի օղիի շիշեր շարուած են, ինչ որ կը նշանակէ թէ անոր սպառումը ամէնէն շատն է եւ մարդիկ դրամ ունին օղի գնելու: Ֆրանսացիները 100,000 տետթըր տուած են շինելու, իւրաքանչիւրի շինողէք վճարելով 4 լիբանանեան ոսկի, ինչ որ կը նշանակէ թէ Այնճար մտած է 400,000 լիբանանեան ոսկիի պատկանելի գումար մը: Կարելի չէ եղած ցայժմ Միութեան մասնաճիւղ մը կազմել Այնճարի մէջ:

3. Սուրի եւ Ռաս Ու Այնի Գաղթականները. Երկուքը իրարմէ շուրջ հինգ քիլոմետր հեռաւորութեան վրայ կը գտնուին: Ջուրին ակերը առատ ջուր կու տան ու լիովին բաական են ոռոգելու երկու գաղթականներու հողերը, որոնք բաականաչափ են: Այս գաղթականները կը կարօտին թրաքթորի մը, ինչպէս վերը ըսի: Միութեան կողմէ գնուելիքը պէտք է անոնց տրամադրուի: Երկու գաղթականները գրեթէ Այնճարի չափ տուներ ունին եւ ընտանիքներէ կը բաղկանան: Ժողովուրդը հոս առաջին վայրկեանէն կը տեսնէ որ Բարեգործականին համակիր է եւ երկու գաղթականներուն մէջ մասնաճիւղեր կազմուած են գրեթէ 150-160 անդամներով: Հոս ալ [, Այնճարի նման,] իւրաքանչիւր տուն կը բաղկանայ մէկ սենեակէ ու կից ունի 400 քառակուսի մետր պարտէզ մը բանջարեղէնի մշակութեան համար: Շատեր տունին յարակից մասեր շինած են իրենց ծախքով, որոնք կը ծառայեն իբր քնակարանի մաս, գոմ են.: Ատկէ գատ, իւրաքանչիւր ընտանիք ունի գիւղին մօտիկը իր մշակութեան հողը: Հոս կը գտնուին ընտանիքներ, որոնք փոխանակ իրենց մշակուի իրենց հողը, դրացի արարներու կը յանձնեն այդ հողը եւ կը ստանան բերքին 40 առ հարիւրը, մնացեալ 60 առ հարիւրը թողլով վարձակալ արարին: Ասիկա ճիշտ չէ, ամէն որ իր ստացածը պէտք է ինք մշակէ եւ ամբողջութեամբ օգտուի անկէ: Ընդհանրապէս իրենց մշակութիւնները շատ յաջող են ըլլալ հողին բարեբերութեան, ըլլալ ջուրի առատութեան պատճառով: Սուր այցելութեան օրս տարօրինակ պարագայի մը ականատես եղայ: Ամերիկայէն դրկուած հագուատեղէններէ մաս մըն ալ այս գաղթականները դրկուած էր բաշխուելու համար, անշուշտ կարօտեալներուն: Վարժարան-եկեղեցիի սրահին մէջ հաւաքուած էին ուսուցիչ եւ թաղական խորհուրդի անդամներ եւ այդ գործով կը զբաղէին: Հագուատեղէնները քանի մը կտորներով բազմաթիւ կապուցներու վերածուած էին եւ անոնցմէ մաս մը չքաւորներու տրուելէն յետոյ, մնացեալը պիտի բաժնուէր մնացեալ բոլոր ժողովուրդին եւ որպէսզի խնդիր չըլլար վիճակահանութեամբ պիտի կատարուէր այդ բաշխումը: Ահաւասիկ բաշխումի եղանակ մը որ զարմանք կը պատճառէր. փոխանակ այդ հագուատեղէնները միայն չքատրներու բաշխուելու, ինչպէս անոնց առաքման նպատակն է, ամէնքին ալ կը բաշխուի թէ՛ խնդիր չունենալու եւ թէ՛ այն պատճառաբանութեամբ թէ չքատրներ չեղողներն ալ հագուատ չեն կրնար գնել, շատ սուղ ըլլալուն: Բնականաբար, տեղւոյն վրայ, անոր անտեղիութեան մասին խօսեցայ: Սակայն այժմէն հարկ կը համարեմ յայտնել որ բոլորովին անելորդ է հագուատեղէն դրկել Սուրիա եւ Լիբանան, ուր պէտք չկայ ատոր: Ոչ մէկ գաղթականի վրայ կը տեսնուին ասկէ առաջ դրկուած հագուատեղէնները:

Այս երկու գաղթականները մէկ քահանայ ունին որմէ դժգոհ է ժողովուրդը, սակայն, Պէյրութի առաջնորդարանը այդ մասին քան մը ըրած չէ: Ժողովուրդը մեր հոն եղած ատեն Կեփ, կաթողիկոսին բողոքագիր մը ներկայացուց եւ խնդրեց որ յիշեալ քահանան հեռացուի անկէ եւ ես ալ այդ մասին խօսեցայ վեհափառին որ շուտով պատշաճը տնօրինելու խոստում տուաւ: Քահանային մասին զեղծումներ կը

պատմուհին: Այսպես, Ռաս Ուլ Այնի վարժարանական շէնքին լրացման համար Գահիրեի հանգանակությունն տրուած գումարով գնուած սիմենթ, երկաթ են. ծախած է կ'ընտփ: Արդարեւ, յիշեալ շէնքը չորս պատերով կիսաաւարտ կը մնայ ինչ որ պէտք է շուտով լրացուի: Այս առնչութեամբ պէտք է անցնեմ որ Սուրիոյ եւ Լիբանանի մեր եկեղեցական եւ ազգային իշխանութիւնները շատ անտարբեր են ժողովուրդին հանդէպ եւ գրեթէ բնաւ անոր կրօնական եւ այլ պէտքերով չեն զբաղիր: Մարդեքը որ նորընտիր վեհափառը շուտով դարման մը տանի այս ցաւալի կացութեան իր կատարելիք նոր կազմակերպութեամբ:

4. Միութեան Նահրի Դարմանատուն. - Այցելեցի նաեւ Միութեան Նահրի Դարմանատունը¹³: Նահրը Պէրյուֆի այն թաղամասն է որ կը բնակի հայ գաղթականութեան մեծագոյն մասը: Դարմանատունը մինչեւ կէսօր բաց է, ուր կայ թփշկ մը եւ մնայուն հիւանդապահուի մը: Քեմփերու չքատր հիւանդները հոս կը դիմեն եւ կը ստանան թշկական խնամք ամէն օր առաւօտուն: Այս դարմանատունը լաւ գործ մը կը կատարէ եւ անիլաժեշտ է որ ան շարունակուի առ այժմ: Բոփշլը՝ Տոքթ. Տիգրան Վարժապետեան¹⁴, համակերէի երիտասարդ մըն է որ ամենայն հոգածութեամբ կը դարմանէ հիւանդները ու կանոնաւոր արձանագրութիւն կը պահէ: Հիւանդներէն հիւանդանոցի պէտք ունեցողները կը դրկուին հիւանդանոց: Ասոր նման դարմանատուներ կան նաեւ Հալէպի եւ Ջահլէի մէջ, այս վերջինը անիլի փոքր աստիճանի մը վրայ: Ասիկա Միութեան լաւ ձեռնարկներէն մին է որ պէտք է շարունակուի եւ որ շօշափելի արդիւնք մը կու տայ:

5. Մալարիայի Գործ. - Արդէն վերը ակնարկեցի Մալարիայի գործին մասին: Տոքթ. Պերպլերեանի կողմէ արդէն չորս տարիէ իվեր առաջ տարուած այս գործը շատ նախնական վիճակի մը մէջ կը գտնուի, թէեւ ինք կը հաւաստէ թէ այս կերպով հիւանդութիւնը ու մահերու թիւը նուազած են: Մնայուն երեք հոգի Պէրյուֆի քեմփերուն մէջ կը պահէ, մէկ հոգի Այնճարի մէջ, մէկ հոգի Սուրի մէջ: Իսկ եղանակին համեմատ 10-20 գործատուներ կ'աշխատեն, խոտերը մաքրել տալու եւ մալարիով դնելու համար լճացած ջուրերու մէջ: Ինչպէս ըսի, ասոր միանգամընդմիշտ դարմանն է մէկ անգամէն եւ հետզհետէ սիմենթ ջուրի ճամփաներ շինել, քանի որ վազող ջուրին մէջ մալարիա չի կրնար ըլլալ, եւ մէկ անգամէն վերջացնել այս գործը: Այժմու Տոքթ. Պերպլերեանի գործելակերպն է տրամադրուած գումարներով - որ տարեկան 15,000 տոլար է - մարդոց ամսականներ եւ օրականներ տալ ջուրերը մաքրելու եւ վազեցնելու համար: Այդ կերպով գործը տարիներով չի վերջանար, մինչ թէ սիմենթով ջուրի ճամփաներ շինուին միանգամընդմիշտ գործը կը վերջանայ եւ տարիներով մարդիկ պահելու պէտք չի մնար: Անցնեմ նաեւ որ Լիբանանի մէջ, բացի լեռնային մասէն չկայ շրջան մը որ մալարիա չկենայ, հետեւաբար կառավարութիւնն է որ պէտք է ստանձնէ այդ գործը, քանի որ անիկա մեր Միութեան նիւթական կարողութեանց սահմանին մէջ գործ մը չէ, այլ կառավարութեան մը:

6. Վարժարաններ. - Դժբախտաբար ամռան շրջանին հանդիպելուն մեր այցելութիւնը Սուրիա եւ Լիբանան, վարժարանները գոց էին ամռան արձակուրդին պատճառաւ: Քեմփերու վարժարանական շէնքերը շատ խեղճ վիճակի մէջ են եւ ոմանք չունին նստարան են.: Մեր Միութիւնը պէտք է իր ուշադրութիւնը ու ամբողջ ուժը կերդռնացնէ վարժարանական գործին վրայ, տարուէ տարի բարուօքելու համար անոնց վիճակը: Այցելեցի նաեւ Միութեան սեփական վարժարանը՝ Դարուիի Յակոբեան, Պէրյուֆի մէջ, որ լաւ շէնքի մը մէջ կը գտնուի: Միջանի փոքր նորոգութիւններու կը կարօտէր որոնց մասին խօսեցայ որ ըլլան: Արդէն, ինչպէս որոշուած է,

կրթական տեսուչին¹⁵ երիտասարդ օգնական մը պիտի տրուի, գործը փափաքելի ձեւով վարելու համար:

7. Ազունիէի Թոքախտաւորներու Բուժարան¹⁶.– Այցելեցի նաեւ այս բուժարանը, որ տեղի եւ կլիմայի տեսակէտով լաւագոյն վայրի մը մէջ կառուցուած է: Մաքրութիւնը եւ ներքին կազմակերպութիւնը լաւ է: Ունի վճարովի առաջին, երկրորդ եւ երրորդ կարգի հիւանդներ որոնց մէջ 20ը օտար: Հայ չքաւորները չորրորդ կարգի են եւ ձրի: 120 հիւանդներ կային, որոնցմէ ըստաձին համեմատ 60-70ը ձրի եւ հայ էին: Լիբանանցի մնայուն բժիշկ մը ունի, իսկ բժշկապետն է Տոքթ. Բարկէն Մկրտիչեան, որ շաբաթը երեք օր կ'այցելէ եւ գործողութիւնները կ'ընէ: Խնդրուած է շէնքը եւ կը փափաքին յարկ մը եւս անցնել կամ առանձին շէնք մը շինել իոն փոխադրելու համար հիւանդապահներու, գործողութեանց եւս ի յարկաբաժինները որոնք այժմ միեւնոյն շէնքին մէջ կը գտնուին: Ինչպէս յայտնի է, խնամակալութիւն մըն է որ կը մատակարարէ այս հաստատութիւնը, որ սակայն որեւէ ազգային իշխանութեան քննթրոյի ենթակայ չէ: Հարկ է որ այս հաստատութեան վրայ դրական հակակշիռ մը ի գործ դրուի ազգային իշխանութեանց կողմէ: Բարդ հաստատութիւն մըն է որ կը կարօտի ատոր համապատասխան ազդու հակակշիռ մը որ այժմ չկայ: Հաստատութիւնը ինքնին օգտակար է Սուրիոյ եւ Լիբանանի ու դրացի հայ գաղութներու չքաւոր թոքախտաւորներուն համար:

8. Ճիպէլլի Թնչնոց Բոյն Որբանոց¹⁷.– Այցելեցի այս հաստատութիւնը, որ լեռ-ամառանոց փոխադրուած էր եւ որուն Միութիւնը տարեկան 3000 տոլարով կ'օգնէ պատերազմի շրջանին, Տանիմարբայէն դրամ չկարենալ ստանալուն համար: Տեսնուեցաւ տնօրէնտիկ Միս Մարիա Ճէլքըպսընի¹⁸ հետ՝ գրեթէ ամբողջ օրը որբանոցին մէջ անցընելով: Այժմ ունի 112 փոքրիկներ՝ 4-16 տարեկան, մեծամասնութեամբ աղքիկներ: Տղաք կան փոքրիկներուն մէջ: Բացառիկ շրջանի մը միջոցին օգնութիւն ընձայունեցաւ այս հաստատութեան: Նորմալ պայմաններու մէջ նման հաստատութեանց օգնելու է Միութիւնը եթէ անկա իր քոնթրոլին ենթակայ ըլլայ:

Եզրակացութիւններ

Ա.– Ինչ որ Գահիրէէն Տիար Ճանիկ Չազըրի տեղեկութիւններուն վրայ Կեդրոնական Վարչութեան առաջարկուած է, Սուրիա եւ Լիբանան այցելելէ եւ անձամբ ամէն բան տեսնելէ յետոյ իմ ալ եզրակացութիւնս է, որ պէտք չէ ուղղակի կանգուած ըլլալ Նիւ Եորքին Նպաստից Յանձնաժողովը, այլ ուղղակի ենթակայ՝ Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին: Արդէն Գահիրէի առաջարկած նոր կազմակերպչական ծրագիրը, որ անպայման պէտք է կիրարկուի, այդ աննորմալ կացութեան վերջ պիտի դնէ բոլորովին: Անցնեմ որ այդ պատճառաւ, պատերազմի տարիներու ընթացքին մեր Միութիւնը տուած է Սուրիոյ եւ Լիբանանի մէջ:

Բ.– Պատերազմի շրջանին Նպաստից Յանձնաժողովին միջոցաւ մեր Միութեան ծախսած հարիւր հազարաւոր տոլարի գումարները ոչ մէկ շօշափելի հետք ձգած են եւ ոչ մէկ ձեռնարկ գոյութիւն ունի որ անոնց ապացոյց ըլլայ: Կերպով մը պարապի ծախսուած են ատոնք: Անցողակի ալ, ինչպէս ակնարկեցի վերը, Բարեգործականի հանդէպ ոչ մէկ երախտագիտական զգացում գոյութիւն ունի ժողովուրդին մէջ որուն ստուար մեծամասնութիւնը չի գիտեր թէ այդ գումարները Բարեգործականի կողմէ (իմա՝ յատկացուած են – Ա.Տ.) ծախսուած են:

Գ.– Տարբեր է բոլորովին պատերազմի այս տարիներէն վերջ, Լիբանանի եւ Սուրիոյ հայութեան նիւթական վիճակը: Այսօր իոն ստուարաթիւ բարեկեցիկ դասակարգ մը գոյութիւն առած է որ բոլորովին անտարբեր է իր մօտ գտնուող կարօտեալ-

ներուն հանդէպ: Այս երկու գաղութները ներկայիս ի վիճակի են իրենց կարօտեալները հոգալու եւ պարտին հոգալ: Պէտք է այդ ուղղութեամբ աշխատանք տանիլ իոն:

Դ.- Բացարձակ աւելորդ է այլեւս հազուատեղէն դրկել, դրամական նպաստներ տալ: Պէտք է Միութիւնը իր ուժը կեդրոնացնէ վարժարաններուն, դարմանատուններուն գործին եւ փոքր աստիճանի վրայ մայրիայի դէմ պայքարին: Ասկէ անդին այլեւս այդ գաղութին մէջ բան մը ընելու պէտք չունի: Գաղութը ինք պէտք է հոգայ իր պետքերը: Արտասահմանի շարունակական նպաստներու հետեանքով՝ Սփրիոյ եւ Լիբանանի հայ գաղութին բարեկեցիկ դասակարգը ինքզինք անտարբերութեան տուած է, իսկ չքատուր դասակարգին մէջ ալ նախաձեռնութեան ոգին մեռած է եւ ծոկութեան վարժուած է:

Ե.- Անիրաժէշտ է, ինչպէս որոշուած է, Նոյեմբերէն սկսեալ, Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին կողմէ առաջարկուած եւ ծրագրուած նոր կազմակերպչական ծրագիրը կիրարկել, վերջ տալով Նպաստից Յանձնաժողովին անջատ եւ Նիւ Եորքի կապուած գործունէութեան: Գահիրէն պէտք է ունենայ իր ամբողջ շրջանակին ընդերուր եւ ինքն ալ պատասխանատու ըլլայ Կեդրոնին:

Գահիրէ, 11 Սեպտ[եմբեր] 1945 Ստոր[ագրութիւն] Հայկ Գալուզեան



Նոթեր

Այնճար.- Պէյրութ գտնուելու, բնականաբար հետաքրքրուեցայ տեսնել ճեպկմուսացիներէ բաղկացած եւ ֆրանսացիներու կողմէ շինուած տուններու մէջ զետեղուած մօտ 1000 ընտանիքէ (5000 անձ) բնակուած գաղթականացի Պեքաայի դաշտին մէջ, մօտ 1000 մեթր բարձրութեան վրայ:

Այնճարի մասին յաճախ լսած էի, բայց որպէսզի կարող ըլլայի անսխալապէշար կերպով գաղափար մը կազմել, անակնկալօրէն եւ առանց ինքնութիւնս հասկցնելու իոն գացի: Հոն ինձի հանդիպողը, տեղւոյն ազգային վարժարանի շրջանակէն Պոյաճեան կոչուած անձը եղաւ:

Զարմանքս շատ եղաւ երբ այս գաղթականանին զանազան ձեռնարկներուն, շինութեանց եւ այլ գործերու շուրջ հարցումներ ուղղեցի չգիտցողի մը ձեռով: Զիս չճանչցող այդ պարունը միօրինակ պատասխան մը տուաւ. «Ատոնք բոլոր ընտղն եւ դաշնակցական Օգնութեան Խաչը»: Գիտէի, սակայն, որ տեղւոյն ըմպելի եւ գործածութեան ջուրը հայթայթող փոմփին, մեքենային եւ խողովակներուն զետեղումը, աղբիւրներուն բաժանումը, տեղւոյն առողջապահական ձեռնարկները՝ դարմանատուն, մայրանոց, երկրագործական աջակցութիւնները՝ սերմնոց, լծկան եզներ, թրաքթոր եւ այլ բաներ, ամենամեծ մասով շինուած եւ հայթայթուած էին մանաւանդ ՀԲԸ Միութեան ձեռամբ:

Ուստի հարցուցի թէ Միութիւնը բան մը ըրած չունի՞:

- Շատ քիչ բան...- եղաւ պատասխանը:

Այցելեցի ցրաղացը, ջուրի փոմփը, ջուրին ակը: Ամէն ինչ լաւ վիճակի մէջ էի: Միութեան աջակցութեան գլխատուր բաժինը միշտ հոս դրկուած է: Ամէն ընտանիք ունի իր տունը եւ մշակման հողը: Ասով հանդերձ, իոն կարելի չէ եղած ունենալ ոչ իսկ փոքր մասնաճիւղ մը շէֆերուն ընդդիմութեան եւ գումարներ տեղացեացի Նպաստիցին անտարբերութեան պատճառով:

Տեղւոյն բողոքական եւ հայ կաթոլիկ վարժարանները Միութենէն նպաստընկալ են: Ազգային վարժարանը նպաստընկալներու շարքին չէ, որովհետեւ տեղւոյն

շէֆերը հակառակ Միութեան բարեկամ մեծամասնութեան, մերժած են Միութեան կրթական հակակշիռը: Եւ այդպէս ըլլալով հանդերձ, Նպաստիցը առանց նկատի առնելու այս պարագան ինքնագլուխ ամէն տարի մեծագումար դրամներ տուած է Միութիւնը չճանչցող այդ վարժարանին եւ Նոյնիսկ 600 սուրիական ոսկի Նուրը մը անուանացող ուսուցչի մը... առանց ժողովի գիտակցութեան:

Զահլէ.- Այնճարէն, Լիբանանի կարեւոր հայակեղորոններէն եղող Զահլէ գահի, ուր կրցայ տեսնուիլ Միութեան մասնաժողովի առեւտրային եւ Բարեգործականին հաւատարիմ աշխատատեղերէն Յարութիւն Յովակիմեանին¹⁹ հետ: Հոս Այնճարի հակապատկերը ըլլալով, իմացայ որ 20 տարիէ աւելի է որ գոյութիւն ունի ՀԲԸ Միութեան մասնաճիւղը 60-70 վճարող անդամներով: Տեղ մը ահա, ուր Միութեան բարիքը մոռցուած չէ, եւ երբ օգնութեան տեսակետով միայն Այնճարի անունը կը լսուի միշտ, իմացանք որ Զահլէ եւ շրջակայք՝ Շթորա, Ռայաք, Պապլաք, կան բազմաթիւ գաղթականներ, որոնց շատ աննշան աջակցութիւններ կը տրուին:

Սուր, Ռաս Ու Այն.- Այցելեցի, միշտ առանձինս, Նաեւ Սուրի եւ անոր մօտիկ Ռաս Ու Այնի (Ռաշիտիէ) մօտ [գտնուող] 250 տնտուր գաղթականները այն միեւնոյն տեսակ բնակարաններով, որպիսիք տեսայ Այնճարի մէջ, շինուած ֆրանսացիներու միջոցով: Ատոնցմէ մօտ 75ը շինուած են ՀԲԸ Միութեան կողմէ, Նուպարեան անունով: Հոս տրամադրութիւնները բոլորովին հակոտնեայ գտայ Այնճարէն: Ժողովուրդը աւելի բարեկիրթ, տուները եւ պարտէզները աւելի ճաշակատու: Երկու մասերու մէջն ալ գաւտ-գաւտ Միութեան մասնաժողովներ [կան]: Վարժարաններն եւ – ազգային, հայ անտարանական կամ հայ կաթոլիկ, ամէնքն ալ նպատարնակալ Բարեգործականէն:

Եթէ նկատի չունենանք վերաբերումովը եւ զեղծամներովը ծանօթ իր պաշտօնին անարժան քահանան, որուն դէմ ծանր գանգատներ կան, այս գաղութը, բաղդասաքար, հանդարտ է եւ ժողովուրդը իր երկրագործական աշխատութեանց նուիրուած կը մնայ, չունենալով հանդերձ Այնճարին շոյալլուած աջակցութիւնները: Տեղ մը ահա, ուր Միութեան բարի սերմը ապառաժի վրայ ցանուած չէ:

Պէյրութի Գաղթական[յա]նները.- Պատեհութիւն ունեցայ Նաեւ այցելելու Պէյրութի եւ արուարձաններու թիթեղաշէն, տախտակաշէն խարխլած տնակները, բազմահարկիւր եւ խնդրուած, ուր գաղթականները կ'ապրին վերեւ յիշուած գաղթականներէն անհամեմատ կերպով աւելի գէշ եւ հակաառողջապահական պայմաններու տակ: Ամառը՝ կիզիչ արեւուն եւ ծմեղը՝ անարեւ եւ ցուրտին ունց:

Միեւնոյն խեղճով վիճակը ունին Նաեւ բազմահարկիւր փողքիկներ ունեցող փայտաշէն թիթեղածածկ դպրոց-եկեղեցիները: Դպրոցները նպաստունկալ են:

Այս քննվիներ ամէնքն ալ ունին Պէյրութի մասնաժողովին առընթեր իրենց ՀԲԸ Միութեան օժանդակ ճիւղերն, ամէնքն ալ գնահատող՝ Միութեան աջակցութիւնները, որոնք ինչպէս ըսինք, անհամեմատօրէն վար կը մնան Այնճարի ժողովուրդէն:

Այցելեցինք այդ շրջանի - Նահր-Պուրճ Մամուտ - մալարիալով վարակուած] վայրեր, ուր այդ հիւանդութեանց դէմ պայքարելու համար Միութիւնը, ամէն տարի, մեծագումար դրամ կը վատնէ յումպէտս: Զոյգ ջրաղացները տեսայ, աղտոտութիւններով լեցուն, ատոնց արմատական դարմանը բժշկական անցողակի դեղերով կարելի չէ ընել: Զուր ծախքեր, աւելի ոեքլամի համար: Անհրաժեշտ եղածը այդ ջրակոյտները պեղումներով եւ մաքրումով գոցել է՝ զայնս առաջնորդելով դէպի ծովը: Բայց ատիկա ալ՝ Միութեան ուժերէն դուրս կառավարութեան միջոցով [կամ] հայ հարուստներուն ձեռամբ [պէտք է ըլլայ]:

Այցելեցի նաեւ, Հալէպի մէջ, Մէլտանի գաղթակայանները եւ միւսները, ամէնքն ալ միևնույն պայմանաց մէջ:

Մասնաժողովներ. - ծրագրուած է Պէրյուֆի եւ Հալէպի մայր մասնաժողովները վերածել Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովի ձեռքին տակ ենթայանձնաժողովներու:

Պէրյուֆի մէջ տեսնուեցայ մասնաժողովի ատենապետ տի[ար] Հմայեակ Գրան-եանի²⁰ հետ, որ միանգամայն անդամ է նաեւ (վերջէն անուանուած) Նպաստիցին:

Որքան կրցայ հասկնալ այս կարետոր մասնաժողովը անգործութեան դատապարտուած է Նպաստից Առժամայն Յանձնաժողովին արհարմարական եւ ինքնագլուխ գործունէութեան հետեանքով, զգուցնելով եւ հեռացնելով Միութեան բազմամեայ համակիրները, եւ շուքի մէջ ձգելով մնայուն մասնաժողովները:

Նպաստիցը, նոյնիսկ անտեսելով Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովը, իր յարաբերութիւնները կը կատարէր Կեդրոնի հետ: Այդ մարմինը, ինչպէս ժամանակին Գրանեանի կողմէ գրուած է Կեդրոնական Վարչութեան - բաղկացած է մեծամասնութեամբ հակաբարեգործական տարրերէ, որոնք միշտ դէմ եւ հեռու մնացած են Բարեգործականէն, եւ միայն վերջին տարիներս, Նպաստիցին դրամներով անուն շինելու եւ այդ նպաստները իրենց ուզած կերպով գործածելու համար 2-3 տարի առաջ անդամագրուած են... վճարելով ամսական մէկ յիբանանեան ոսկի, մօտ 40 սենթ: Այս պարագան բաական է ցոյց տալու իրենց իսկական նկարագիրը եւ տրամադրութիւնը Միութեան նկատմամբ, որուն հարկիւր-հազարատը տոյարները կը բաժնեն:

Հալէպի մասնաժողովը, որուն, գրեթէ մնայուն ատենապետն է տիար Արմէն Մազլումեան²¹, քանի մը խելքը գլուխը գործակիցներով, թէւ քիչ մը աղայական, սակայն սրտովին Բարեգործականի կապուած է, մօտ 35 տարիներէ իվեր անոր անդամ ըլլալով, ինչպէս նաեւ՝ պատուոյ անդամ:

Այս մասնաժողովն է որ բացէն ցցուեցաւ Նպաստից Առժամայն Յանձնաժողովին ինքնագլուխ եւ քնահաճ գործելակերպին դէմ, երբ մասնաանդ Նպաստիցը որոշեց Միութեան նպաստները բաշխել իրմէն որոշուած յանձնախումբերու ձեռամբ: Հալէպի մասնաժողովին, Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին եւ Նիւ Եորքի Կեդրոնին բով ըրած ազդու բողոքներուն վրայ է որ Կեդրոնի հրահանգով Նպաստիցը ստիպուեցաւ իր բաշխումները կատարել, արդէն գոյութիւն ունեցող մասնաժողովներուն ձեռամբ:

Ամէն քիչ [թէ] շատ, մեծ թէ փոքր տեղերու մէջ կան մասնաճիւղեր, մանաւանդ հոն, ուր վարժարանները նպաստընկալ են: Ասոնք շատ անելի առաջ կրնան տարուիլ, նախ, վերցնելով Նպաստից Յանձնաժողովին խոջընդոտը եւ յետոյ զայնս վերակազմելով կանոնատըր գործիչի մը եւ պրոպագանտի միջոցով:

Ինչպէս ամէնուրեք - եւ Միութեան հիմնարկութենէ իվեր - այս կողմերն ալ, հայ կազմակերպութիւններէն միայն ռամկավար ազատականներն են որ անդամ են զօրավիճ կանգնած են Միութեան եւ անոր ձեռնարկներուն: Միւսները դէմ եղած են միշտ ինչպէս դաշնակցականները, եւ սառն կամ անտարբեր, ինչպէս համայնավարները եւ հնչակեանները:

Ազգային իշխանութիւններն ալ, այնքան նպաստատրուող Միութենէն, դաշնակցականներուն եւ հակաբարեգործականներուն ազդեցութեան տակ գտնուելուն, դէմ եղած են Միութեան, հակառակ Կիլիկիոյ կաթողիկոսարանին, որ իր հանգուցեալ Սահակ, Բաբկէն եւ Պետրոս կաթողիկոսներով ամենաջերմ բարեկամ եւ զօրավիճ եղած է միշտ ՀՐԸՄիութեան:

Այս տեսակետով մեծ անակնկալներ²² կան նորընտիր Գարեգին վեհափառ կաթողիկոսին²³:

Քանի որ այս առթիւ Նպաստից Կեդրոնական Առժամեայ Ցանձնաժողովին մասին եւս խօսեցանք, անցողակի, սա եւս ըսեք որ ան - եթէ մանաւանդ պատերազմի շրջանին - փոխանակ իրեն տրամադրուած բազմահազար տոլարները յամպետս որպէս ողորմութիւն բաժնելու - Միութիւնը իջեցնելով աղքատախնամներու աստիճանին - եթէ այդ գումարները ձեռնարկներու յատկացուէր, զինոտրական պահանջաց համար - զգեստ կարել, գուլպայ, վրան, կօշիկ են., են. արհեստներով - ոչ միայն դրամները անօգուտ մսխուած չէին ըլլար, այլեւ դրամագլուխին եւ գործին յաւելումով, շարունակումով կարելի պիտի ըլլար բազմահարիր աղքատ ընտանիքներու պատուաւոր աշխատութեամբ գործ եւ ապրուստ հայթայթել...:

Կրթական Ձեռնարկները.- Միութիւնը կը նպաստէ իրեն հակակշիռը ընդունող եւ Միութեան համակիր տեղերու վարժարանաց, եւ աղքատ եւ փոքր շրջաններուն, ուր առանց Միութեան աջակցութեան հայ մանուկները ազգային կրթութենէ զուրկ պիտի մնային: Մեծ կեդրոններու մեծագումար դրամներ, պիտոճէներ ունեցող վարժարանաց տրուածները անելի խորհրդանշական են եւ կ'ըլլան՝ պահելու համակրական կապերը:

Ոչ մէկ յարանուանական խտրութիւն: Ազգային վարժարանները զուրկ արտաքին աջակցութիւններէ, որպիսիք ունին հայ կաթողիկ եւ հայ անտարանական վարժարանները, ամենէն կարօտեալներն են: Ազգային վարժարանաց միակ կանոնաւորապէս նպաստողն է ՀՀԸՄիութիւնը: Վերջացող տարեշրջանին Միւրիդի եւ Լիբանանի նպաստընկալ վարժարանաց թիւը եղած է 93, որոցմէ 39ը Լիբանանի, 11ը Դամասկոսի, 12ը Քեսապի եւ 31ը՝ Հալէպի շրջաններուն մէջ: Ասոնցմէ 53ը ազգային, 21ը հայ անտարանական եւ 19ը՝ հայ կաթողիկ:

Ասոնցմէ տարբեր է Պէյրութի մէջ Միութեան սեփական Դարուի Յակոբեան Աղջկանց Բարձրագոյն Նախակրթարանը, չորս տարեշրջանով: Այցելեցինք շէնքը, քոլորովին արդիական կազմածներով: Արձակուող ըլլալով չկրցինք տեսնել սանուիկները, որոնք կը մեծնան ազգային դաստիարակութեամբ, ըլլալու վարժուիկներ եւ ընտանիքի մայրեր:

Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն.- ՀՀԸՄիութեան Սիւրիոյ եւ Լիբանանի կարեւոր ձեռնարկներէն մէկն եւս, ատենին Նիր Իսթ Ռիլիֆի կողմէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ անկէ ետք Բաբէկէն Կաթողիկոսին օրով Միութեան փոխանցուած Հայ Երիտ. Ընկերակցութիւնն է, ենթակալ Միութեան նիւթական եւ բարոյական հակակշիռ:

Ընկերակցութիւնը ունի իր գլխաւոր ճիւղերը Պէյրութի, Հալէպի եւ Դամասկոսի մէջ, եւ երկրորդական ճիւղերը, շատ մը այլ կեդրոնները - մօտ 15 մասնաճիւղ - անելի քան հազար երկսեռ անդամներով:

Պէյրութի գլխաւոր ակումբն է Զարեհ Նուպար ակումբը, գեղեցիկ եւ ընդարձակ շէնքի մը մէջ, մեծ սրահներով: Իր օժանդակ ճիւղերն են Մելգոնեան Ընթացաւարտից, Գրասէր Երիտասարդներու Միութիւնը (ԳԵՄը, *Չիաժաւ*²⁴ պարբերաթերթովը), համալսարանական երիտասարդաց եւ մարզական միութիւններ: Այս ձեռնարկները կ'արժէ մասնաւոր ուշադրութեան անել, զի անոնցմէ է որ կը պատրաստուին ՀՀԸ Միութեան վաղուան ուժերը եւ աւոր համար ալ տարբեր հակաբարեգործական միութիւնները կ'աշխատին զայնս կազմալուծել եւ կամ իրենց մէջ տեսնել:

Երիտասարդաց Միության վերին Վարիչ Մարմինն է Պեյրուֆի մէջ նստող Կեդրոնական Վարչութիւնը: Ամէն ակումբ ունի նաեւ Բարեգործականի վստահելի անդամներէ բաղկացած Գործադիր եւ անդամներէն ընտրուած տեղական վարչութիւն:

Այս ընկերակցութիւնը վաերացումն է սիրիական եւ լիբանանեան կառավարութիւններէն: Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովը ամէն տարի կարեւոր գումարով մը կ'օգնէ ձեռնարկին:

Կազմակերպական

Վերը արդէն անդրադարձայ Նպաստից Յանձնաժողովին տարականոն գործունէութեան Եգիպտոսի շրջանակին մէջ ուղղակի կապուած Նիւ Եորքին: Ասիկա տեսակ մը կազմալուծում առաջ բերած է Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, ուր Միութիւնը գործունէութեան ընդարձակ դաշտ մը ունի որ կարելի չէ եղած մշակել պէտք եղածին պէս:

Անհրաժեշտ է այդ տարականոն գործունէութեան շուտով վերջ տալ եւ Միութեան ամբողջ գործերն ու ձեռնարկները Եգիպտոսի շրջանակին մէջ՝ դնել Գահիրէի Կեդրոնական Յանձնաժողովին հակակշիռն ներքեւ, որուն համար արդէն այդ մարմինը Նիւ Եորք կազմակերպական նոր ծրագիր մը ներկայացուցած է, որ շուտով եւ ամբողջութեամբ կիրակութեան դրուելու է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ ՀԲԸՄի կեդրոնը 1921ին փոխադրուած էր Փարիզ՝ Գահիրէէն, ուր մնացած էր Գործադիր Ժողով մը: Յետագային, Բ. Աշխարհամարտի ընթացքին, Կեդրոնը փոխադրուած էր Ֆրանսայէն Նիւ Եորք: Պատերազմական այդ տարիներուն կազմակերպական, վարչական-իրաւասական զանազան հարցեր յառաջացած էին եւ մնացած անլոյծ: Հիմա որ Աշխարհամարտը հասած էր աւարտին, Գահիրէի այս քայլը նպատակ ուներ նաեւ քարտեւագրել գլխաւոր մարմիններու իրաւասութեանց աշխարհագրական ծիրը:

² Ճանիկ Չազըր (1879-1955), Եգիպտահայ ծանօթ ազգային-հասարակական գործիչ, 1924-54՝ Գահիրէի Թեմական Ժողովի ատենապետ, առաջնորդող դեր ունեցած է ՀԲԸՄի Եգիպտոսի շրջանակի 1930-50ականներու գործունէութեանց (Ա. Ալօյանեան, «Ճանիկ Հայկ Չազըր», *Սիւն*, Օգոստոս 1955, էջ 239-40): Տուեալը տրամադրեց Հայկ Աագեանը, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

³ Նպաստից Կեդրոնական Յանձնաժողովը կը կազմուի 9 Յունիս 1939ին, ձեռամբ Սարաճեան սրբազանի, ՀԲԸՄ Փարիզի կեդրոնէն ստացուած հրահանգի մը հիմամբ: Յանձնաժողովին նպատակն էր նպաստել 16-22 Յուլիս 1939ին Ալեքսանտրիոյ սանճաքէն տեղահանուած հայութեան Լիբանան հաստատման (Տորթ, Տ.Ա. Պէրպէրեան, «Ամփոփ Տեղեկագիր ՀԲԸՄի Նպաստից Կեդրոնական Յանձնաժողովի Վեցամեայ Գործունէութեան»՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ապրիլ Յուշամարտեան, Հրատ.՝ ՀԲԸՄիութեան Լիբանանի Վեթերաններու եւ Բարերարներու Համախմբումին [խմբ.՝ Ներսէս Շիրինեան, Յակոբ Ղազարեան, Ասատուր Մակարեան, Զաւէն Մաըրլեան], Պեյրուֆ, Տպ. Ատլաս, 1969, էջ 46-49):

⁴ Հայկ Գաուքեան (1876–1977), ձեռնարկատէր, բարերար անդամ ՀԲԸՄիութեան, ատենապետն էր Նիւ Եորքի Ա. Վարդան Կաթողիկէի կառուցման

յանձնախումբին: 1920ականներուն հիմնած էր իր ընկերութիւնը՝ The Bingham Photoengraving Company: Տոնելը տրամադրեց Ղոկոտ. Վաչէ Ղազարեանը, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

⁵ «425րդ Նիստ ՀԲԸՄիութեան Եգիպտոսի Կեդր. Յանձնաժողովին, զումարում 5 Հոկտեմբեր 1945ին, Երեկոյեան ժամը 7ին, Իր Գրասենեակին Մէջ», ՀԲԸՄ Գա-հիրէի արխիւատուն, համապատասխան տոմար: Ատենագրութիւնը տրամադրեցին Մարուշ Երամեանն ու Պերճ Թերզեանը, որոնց կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

⁶ Երկու գաղթականները կը գտնուէին իրարմէ շուրջ 3 քիլոմետր հեռու: Առաջինը՝ Պէրոյի Նաաիանգիստին կից եւ գոյատեւեց մինչեւ 1976 (թէւ 1960ականներէն սկսեալ հայերու մեծամասնութիւնը տեղափոխուած էր Պէրոյի արուարձանային այլեւայլ շրջաններ, մինչ գաղթականը բնակեցուած էր պաղեստինցիներով, քիւրտներով, Սուրիայէն թէ տարբեր շրջաններէ եկած ոչ-քրիստոնեայ պաւղոտներով): Սանճաքցիներու քեմիլը կը գտնուէր Պուրճ Համուտի արեւելեան մուտքին կից: Անոր շինութեան ՀԲԸՄը մասնակցած էր կառուցելով 250 տնակ: Գաղթա-վայրը գոյատեւեց մինչեւ 1970ականներու վերջերը: Այնուհետեւ ան ենթարկուեցաւ մասնակի քանդումներու: Հոն շինուեցան Հարպոյեան շէնքերը եւ առետրա-կան կեդրոնը, իսկ 2000ականներու կէսերուն, Պուրճ Համուտի քաղաքապետա-րանը ձեռնարկեց նոր, բնակիչի շէնքերու եւ կառատան կառուցման: Ներկայիս այդ գաղթականէն մնացած է հազիւ թաղ մը:

⁷ Այս պարագային՝ կոյուղի:

⁸ Ֆրանսայի Հոգատար Իշխանութեանց կողմէ Ալեքսանտրէի սանճաքին Թուրքիոյ յանձնումով շրջանի հայութիւնը (բացի Վաքըֆ գիւղի բնակչութեան մէկ մասէն) լքեց իր բնակավայրերը եւ մեծ մասով հաստատուեցաւ Լիբանան: Մուսա Լեռան գիւղերու բնակչութիւնը արմատաւորուեցաւ Այնճարի ճահճոտ դաշտավայրը, մինչ սանճաքի քաղաքաբնակ բնակչութիւնը տեղաւորուեցաւ մասնաւորաբար Սայտայի եւ Սուրի գոյգ գաղթականներուն մէջ:

⁹ Հաուրրոտ Գարակէօզեան Յիշատակի Հաստատութիւնը (Howard Karagheusian Commemorative Corporation) թշկա-ընկերային ցանց մըն է, հիմնուած 1919ին: Հաստատութիւնը կը գործէ Լիբանանի մէջ 1941էն սկսեալ:

¹⁰ Տոքթ. Յովսէփ Ենիգոմշուեան վկայուած է Պէրոյի Ամերիկեան Համալսարանի թշկական բաժնէն, 1918ին: Եղած է ՀԲԸՄ Լիբանանի Շրջանակային Ա. Յանձ-նաժողովի պատուակալատեսնապետ: Հիմնադիրներէն է Հայ Ազգային Բուժարա-նի, որուն խնամակալ վարչութեան առեւտրապետութիւնը վարած է 1931էն 1960:

¹¹ Ան փոխատնադպիրն էր Նպաստից Յանձնաժողովին:

¹² Չվերահսկուած:

¹³ Պէրոյի դարմանատունը հիմնուած է Յունուար 1941ին: Ան կը շարունակէ գործել մինչեւ այսօր:

¹⁴ Տոքթ. Տիգրան Վարժապետեան (1913–1977), գրող, լիբանանի գործիչ:

¹⁵ Խօսքը Միքայէլ Նաթանեանի (1867–1954) մասին է, որ նախապէս եղած էր ՀԲԸՄ Կիլիկիոյ եւ Սուրիոյ ընկիւն-պատմիրակ, ապա՝ ՀԲԸՄ Սուրիոյ եւ Լիբանանի նպաստընկալ վարժարաններու կրթական տեսուչ:

¹⁶ Ազունիէի Ազգային Բուժարանը հիմնուած է 1922-23ին, Պէրոյի իւսիս, Ճիւ-նիի ձուտակայ Մասմըլթէնի մէջ. 1938ին փոխադրուած է Ազունիէ գիւղը, աեւի մեծ հնարաւորութիւններով՝ 110,000 քառ. մետրի վրայ:

- ¹⁷ 1919-26՝ Նիր Իսթ Բիլիֆի հովանաորութեամբ գործած որբանոց, Ճիպէյի մէջ: 1926ին փակուելէ ետք, 1928ին ան կը վերաբացուի՝ դանիացի միսիոնարներու ջանքերով. 1970էն՝ կը գործէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին տակ:
- ¹⁸ Մարիա Ճելքապըն (1887–1960): Ամբողջ կեանքը հայ որբերուն նուիրաբերած դանիացի միսիոնար: 1907-19՝ Խարբերդի մէջ հայ որբերու հոգածութենէն ետք, կ'անցնի Լիբանան, ուր Սայտայի, ապա՝ Ճիպէյի մէջ կը շարունակէ իր առաքելութիւնը՝ 1928-60՝ ձեռնհասօրէն վարելով Ճիպէյի որբանոցը:
- ¹⁹ Յարութիւն Յովակիմեան/Տազէսեան (1882–1954), 1920ականներու սկիզբէն հաստատուած է Զաիլէ, ուր ծառայած է ազգային-հասարակական գործունէութիւն:
- ²⁰ Հմայեակ Գրանեան (1891-1969), ազգային-կրթական գործիչ:
- ²¹ Արմէն Մազլումեան (1876–1962), իր եղբոր՝ Օննիկի հետ աւարտած է կառուցումը Հալէպի հոգակատր «Օթէլ Պարոն»ի: Շնորհիւ թուրք զինուորականներու հետ իրենց կապերուն, Մազլումեան եղբայրները Մեծ Եղեռնի օրերուն յաջողած են փրկել կեանքը բազմաթիւ հայ գաղթականներու (Թորոս Թորանեան, Պապմութիւն Հալէպի «Օթէլ Պարոն»ի եւ Արմէն Մազլումեանի (Պարոն) Նամականին, Հրատ. ՀԲԸՄ Վահրամ Ապտալեան Մշակութային Հիմնադրամի, Պէյրութ, Տպ. Թեքնոփրէս, 1987. նաեւ՝ «Արմէն Մազլումեան (Պարոն, Անջրդի, Հալէպ)», Գեղարդ, Ա. Տարի, Հալէպ, 1975): Տուեալը տրամադրեց Միհրան Մինասեանը, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:
- ²² Հաւանաբար սխալ մեքենագրուած. պէտք է կարդալ՝ ակնկալիքներ:
- ²³ Հոգշ. Գարեգին Յովակիմեանց (1867–1952), Մեծի Տանն Կիլիկիոյ հայոց կաթողիկոս ընտրուած 10 Մայիս 1943ին, եւ Անթիլիաս ժամանած 23 Մարտ 1945ին:
- ²⁴ Լիբանահայ գրական պարբերաթերթ, լոյս տեսած է 1939-47 շրջանին:

TWO DOCUMENTS ON THE LIFE OF
THE LEBANESE ARMENIAN COMMUNITY IN 1945
(Summary)

ANTRANIK DAKESSIAN
adakeessian@haigazian.edu.lb

By the end of WWII, when world security was restored, the AGBU Cairo Central Committee sent two fact finding missions to Beirut in January and August 1945. The delegates were tasked to write reports on the condition of the Armenians in Lebanon, describe the life and challenges of the Armenian refugees in the camps and come up with recommendations on the types of work/assistance needed from the AGBU Cairo office by these refugees.

The author offers two unpublished documents which shed light on life in the Armenian refugee camps in Beirut, Bourj Hammoud, Sour and Ras Ul Ain (Saida, Rashidiye) and in the newly founded village of Anjar. They describe the poor governance of the community and the relationship between it and the church authorities, assess the lifestyle of these refugees and indirectly reflect the prevailing atmosphere and mood between the different Armenian organizations and parties.

Both documents provide certain data and information on the conditions of the Armenians in Beirut in 1945 and their needs. Both documents are full of direct and indirect suggestions and recommendations concerning the support needed and recommend that the main effort of the AGBU should be focused on and directed towards the local Armenian schools and their improvement.